ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
# 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան 2015

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ ........ 2
2. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքները ........ 4
3. Շրջանավարտների մասնակցությունը օտար լեզուների և բնագիտական առարկաների պետական ավարտական քննություններին ........ 8
4. Պետական ավարտական քննությունների արդյունքների համեմատությունը ըստ սեռերի ........ 9
5. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ բնակավայրի տիպերի ........ 11
6. 2013, 2014 և 2015 թվականների 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքների համեմատություն ........ 12
7. 2015 թվականի 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատություն ........ 15
8. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի ........ 17
9. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ մարզերի ........ 22

# 1. Ընդհանուր տեղեկություններ

2015 թ. հունիսի 3-22-ը և հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածներում Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում հայոց լեզվից և հայ գրականությունից, մաթեմատիկայից, հայոց պատմությունից, օտար լեզուներից և բնագիտական առարկաներից անցկացվել են պետական ավարտական քննություններ, որոնց մասնակցել են այդ հաստատությունների 12-րդ դասարանի շրջանավարտները:

Օտար լեզվի ավարտական քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն կամ ռուսերեն լեզուներից որևէ մեկը, բնագիտական առարկաներից քննության մասնակիցները՝ «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից որևէ մեկը:

Յուրաքանչյուր քննության ավարտից հետո պետական ավարտական քննությունների գնահատականները դպրոցների օպերատորների կողմից առցանց համակարգով մուտքագրվել են ԳԹԿ-ի տվյալների բազա:

2015 թ. պետական ավարտական քննություններն անցկացվել են երկու փուլով. առաջին փուլին մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015 թ. շրջանավարտները, իսկ երկրորդ փուլին՝ նախորդ քննությանը հիվանդության պատճառով չներկայացած կամ դրական միավորների շեմը չանցած շրջանավարտները:

Առաջին փուլի քննություններն անցկացվել են հետևյալ ժամանակացույցով.

Աղյուսակ 1.1

| Քննությունը | Քննության օրը | Քննության տևողությունը |
|---|---|---|
| Հայոց լեզու և հայ գրականություն | 03.06.15 | 2 ժամ |
| Բնագիտական առարկաներ | 08.06.15 | 2 ժամ |
| Մաթեմատիկա | 11.06.15 | 2 ժամ |
| Օտար լեզու | 17.06.15 | 1,5 ժամ |
| Հայոց պատմություն | 22.06.15 | 2 ժամ |

*Պետական ավարտական քննությունների արդյունքների վերլուծությունը կատարվել է հիմնական փուլի արդյունքների հիման վրա:*

Թեստերը գնահատվել են առավելագույնը 50 միավորով:

Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի թվով ճիշտ կատարված առաջադրանքներին:

Աղյուսակ 1.2

| Նախնական միավորը (0-50) | Միավորը 20 միավորանոց համակարգում | | Նախնական միավորը (0-50) | Միավորը 20 միավորանոց համակարգում | | Նախնական միավորը (0-50) | Միավորը 20 միավորանոց համակարգում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 49-50 | **20** | | 28-30 | **13** | | 12-13 | **7** |
| 46-48 | **19** | | 25-27 | **12** | | 10-11 | **6** |
| 43-45 | **18** | | 22-24 | **11** | | 8-9 | **5** |
| 40-42 | **17** | | 19-21 | **10** | | 6-7 | **4** |
| 37-39 | **16** | | 16-18 | **9** | | 4-5 | **3** |
| 34-36 | **15** | | 14-15 | **8** | | 2-3 | **2** |
| 31-33 | **14** | | | | | 0-1 | **1** |

# 2. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքները

## Պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները[1]

Հիստոգրամ 2.1




[1] *Հիստոգրամը սյուների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Սյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախականությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):*










Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի աջ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St. Dev) և մասնակիցների թիվը (N):

*Բաշխման հիստոգրամներից երևում է, որ գրեթե բոլոր առարկաների համար 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է մյուս միավորների թվից: Ակնհայտ է, որ ցածր միավորները արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից:*

## 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 2015 թվականի 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաների արդյունքների ցածր, միջին և բարձր միավորներ հավաքած խմբերը: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 8-12, 13-17 և 18-20 միավորներ ստացած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա: Բոլոր առարկաների համար 8-ից ցածր միավոր ստացած մասնակիցների տոկոսային թիվը 1 %-ից քիչ է: Դա է պատճառը, որ այդ արդյունքները չեն ներառվել խմբային վերլուծության մեջ:

Դիագրամ 2.2




Ինչպես երևում է դիագրամից՝ խմբերը բաշխվել են գրեթե հավասարաչափ համամասնությամբ՝ բոլոր երեք առարկաների դեպքում: 8-12 միավոր հավաքած մասնակիցները կազմում են 39-44 %, միջին 13-17 միավոր ստացած խումբը կազմել է 43-47 %, իսկ 18 միավորից բարձր միավորներ ունեն մասնակիցների 12-15 %-ը:

## 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ առարկաների

Աղյուսակում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են ավարտական քննության արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Աղյուսակ 2.3

| Առարկան | Մասնակիցների թիվը | Միջին միավորը[2] | Ստանդարտ շեղումը[3] |
|---|---|---|---|
| Հայոց լեզու և հայ գրականություն | 17086 | 13.39 | 3.4 |
| Ռուսաց լեզու | 10831 | 12.4 | 3.3 |
| Հայոց պատմություն | 20706 | 13.58 | 3.3 |
| Անգլերեն | 5098 | 14.09 | 3.6 |
| Աշխարհագրություն | 5286 | 13.38 | 3.4 |
| Գերմաներեն | 830 | 12.47 | 3.5 |
| Կենսաբանություն | 6657 | 13.47 | 3.4 |
| Ֆրանսերեն | 528 | 12.98 | 3.5 |
| Մաթեմատիկա | 18111 | 13.13 | 3.4 |
| Քիմիա | 1757 | 12.94 | 3.6 |
| Ֆիզիկա | 6098 | 13.06 | 3.8 |

Որքան փոքր է ստանդարտ շեղումը, այսինքն, որքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջը, այնքան միջին միավորը լավ է բնորոշում տվյալ բազմությունը: Գրեթե բոլոր առարկաների համար ստանդարտ շեղումը և վարիացիայի գործակիցը[4] թույլատրելի սահմաններում են:

*Ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից (14.09), իսկ ամենացածր միջին միավորը՝ «Ռուսաց լեզու» առարկայից (12.4):*

[2] Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:
[3] Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:
[4] Վարիացիայի գործակից = (Ստանդարտ շեղում/Միջին միավոր) * 100 %
Վարիացիայի գործակիցը պետք է լինի < 33.3 %-ից (բայց >10 %-ից), որ միջին միավորը բնորոշ լինի տվյալ բազմությանը:

# 3. Շրջանավարտների մասնակցությունը օտար լեզուների և բնագիտական առարկաների պետական ավարտական քննություններին

Ստորև ներկայացված են դիագրամներ, որոնք ցույց են տալիս շրջանավարտների ընտրությունը բնագիտական առարկաներից և օտար լեզուներից՝ տոկոսային թվերով:

Դիագրամ 3.1




*Բնագիտական առարկաների դեպքում շրջանավարտների ընտրությունը բաշխվել է գրեթե հավասարաչափ «Աշխարհագրություն», «Կենսաբանություն» և «Ֆիզիկա» առարկաների միջև, միայն «Քիմիա» առարկան է ընտրել մասնակիցների ընդամենը 8.9 %-ը:*

*Օտար լեզուների մեջ շրջանավարտների մեծ մասը գերադասել է ռուսաց լեզուն (շրջանավարտների 62.7 %-ը): 29.5 %-ը ընտրել է անգլերենը:*

Ստորև ներկայացված են բնագիտական առարկաների և օտար լեզուների միջին միավորները:

Դիագրամ 3.2



# 4. Պետական ավարտական քննությունների արդյունքների համեմատությունը ըստ սեռերի

Հետևյալ աղյուսակում ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորներն ըստ առարկաների, ինչպես նաև մասնակիցների թիվը ըստ սեռերի և միջին միավորների ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 4.1

| Առարկան | Տղաներ | | | Աղջիկներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թիվը | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը | Թիվը | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը |
| **Հայոց լեզու և հայ գրականություն** | 9473 | 12.83 | 3.5 | 7613 | 14.10 | 3.2 |
| **Ռուսաց լեզու** | 5919 | 11.91 | 3.3 | 4912 | 12.99 | 3.3 |
| **Հայոց պատմություն** | 10032 | 12.89 | 3.3 | 10674 | 14.23 | 3.1 |
| **Անգլերեն** | 2521 | 13.44 | 3.7 | 2577 | 14.72 | 3.4 |
| **Աշխարհագրություն** | 2541 | 12.59 | 3.4 | 2745 | 14.12 | 3.3 |
| **Գերմաներեն** | 395 | 11.64 | 3.4 | 435 | 13.23 | 3.5 |
| **Կենսաբանություն** | 2398 | 12.18 | 3.3 | 4259 | 14.19 | 3.2 |
| **Ֆրանսերեն** | 267 | 11.87 | 3.3 | 261 | 14.12 | 3.4 |
| **Մաթեմատիկա** | 8110 | 12.15 | 3.3 | 10001 | 13.93 | 3.2 |
| **Քիմիա** | 839 | 11.83 | 3.4 | 918 | 13.95 | 3.4 |
| **Ֆիզիկա** | 3491 | 12.56 | 3.8 | 2607 | 13.73 | 3.7 |

*Գրեթե բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են տղաներից առնվազն 1 միավորով ավելի բարձր առաջադիմություն:*

Հետևյալ դիագրամում պարզ երևում է աղջիկների և տղաների միավորների տարբերությունը:

Դիագրամ 4.2



Տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունը ակնառու է հետևյալ հիստոգրամների օրինակով (հիստոգրամներում կապույտ գույնով ներկված են տղաների միավորների հաճախությունները, իսկ կանաչ գույնով՝ աղջիկներինը).

Հիստոգրամ 4.3




Ինչպես տեսնում ենք, գրեթե բոլոր առարկաներից տղաների միավորները կենտրոնացած են ցածր միավորների շուրջ, հատկապես 8 միավորի:

*Ընդհանուր միջին միավորը բարձրացնում են աղջիկները:*

# 5. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ բնակավայրի տիպերի

Աղյուսակ 5-ում ներկայացված են հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի և հայոց պատմության քննությունների մասնակիցների թիվը, տոկոսը և միջին միավորները ըստ բնակավայրի տիպերի:

Աղյուսակ 5

| Բնակավայրի տիպը | Հայոց լեզու և հայ գրականություն | | | Մաթեմատիկա | | | Հայոց պատմություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թիվը | Տոկոսը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Թիվը | Տոկոսը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Թիվը | Տոկոսը | Միջին միավորը (ստ. շեղ.) |
| Խոշոր քաղաքներ | 5219 | 30.5 % | 14.23 (3.4) | 5422 | 29.9 % | 14.3 (3.3) | 6722 | 32.46 % | 14.62 (3.1) |
| Միջին քաղաքներ | 1647 | 9.6 % | 13.79 (3.5) | 1834 | 10.1 % | 13.8 (3.3) | 2316 | 11.19 % | 14.06 (3.2) |
| Փոքր քաղաքներ | 1388 | 8.1 % | 13.95 (3.5) | 1586 | 8.8 % | 13.4 (3.3) | 1872 | 9.04 % | 14.12 (3.3) |
| Գյուղեր | 7294 | 42.7 % | 12.82 (3.2) | 7568 | 41.8 % | 12.3 (3.2) | 8130 | 39.26 % | 12.78 (3.1) |
| Սահմանամերձ գյուղեր | 447 | 2.6 % | 12.56 (3.2) | 492 | 2.7 % | 12.1 (3.3) | 518 | 2.50 % | 11.96 (3.0) |
| Բարձրլեռնային գյուղեր | 1091 | 6.4 % | 12.32 (3.3) | 1209 | 6.7 % | 11.9 (3.3) | 1148 | 5.54 % | 12.02 (3.4) |
| | 17086 | 100.0 % | | 18111 | 100.0 % | | 20706 | 100.0 % | |

Աղյուսակից երևում է, որ մասնակիցների մեծ մասը խոշոր քաղաքներից և գյուղերից են: Ինչպես երևում է աղյուսակից՝ խոշոր քաղաքների միջին միավորները գրեթե մեկ միավորով ավելի բարձր են գյուղական բնակավայրերի միջին միավորներից «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

*Բոլոր երեք առարկաներից խոշոր քաղաքների շրջանավարտների միավորները նշանակալի բարձր են գյուղական բնակավայրերի շրջանավարտների միջին միավորներից:*

# 6. 2013, 2014 և 2015 թվականների 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքների համեմատություն

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության և մաթեմատիկայի արդյունքների հիման վրա կատարվել է համեմատություն 2013, 2014 և 2015 թվականների պետական ավարտական քննությունների մասնակիցների թվի և միավորների միջև:

Հետևյալ դիագրամում ներկայացված են պետական ավարտական քննությունների մասնակիցների թվերը 2013, 2014 և 2015 թվականներին:

Դիագրամ 6.1




*Բոլոր երեք հիմնական առարկաների համար 2015 թվականին նկատվում է պետական ավարտական քննությունների մասնակիցների թվի նվազում:*

*«Հայոց լեզու և հայ գրականություն» առարկան հանձնողների թիվը 2013 թվի համեմատությամբ նվազել է մոտ 36 %-ով, «Հայոց պատմություն» առարկան հանձնողների թիվը 2013 թվի համեմատությամբ նվազել է մոտ 23 %-ով, իսկ «Մաթեմատիկա» առարկան հանձնողների թիվը 2013 թվի համեմատությամբ նվազել է մոտ 32 %-ով:*

Հետևյալ դիագրամներում պատկերված են հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության և մաթեմատիկայի ցածր, միջին և բարձր միավորներ հավաքած խմբերը 2013, 2014 և 2015 թվականների պետական ավարտական քննությունների համար: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 8-12, 13-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների թվի հիման վրա:

Դիագրամ 6.2




Դիագրամ 6.3



Դիագրամ 6.4




Դիագրամներից երևում է, որ երեք առարկաներից նշված խմբերի տոկոսային թվերը տարեցտարի գրեթե չեն փոփոխվել:

Օրինակ՝ մաթեմատիկայից 2013, 2014 և 2015 թվականների պետական ավարտական քննությունների մասնակիցների 42-45 %-ը մշտապես ցածր միավորներ ստացած մասնակիցների խմբում են, 41-43 %-ը՝ միջին միավորներ ստացած մասնակիցների խմբում են, իսկ բարձր միավորների քանակը նվազել է 17 %-ից մինչև 12 %:

Ավարտական քննությունների արդյունքների չփոփոխվելը կարող է պայմանավորված լինել դպրոցների կողմից գնահատման նոր՝ յուրօրինակ ձևի կիրառմամբ. ավարտական թեստի արդյունքների փոխարեն, դպրոցները գնահատում են տվյալ առարկայից սովորողների տարեկան առաջադիմությունը:

# 7. 2015 թվականի 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատություն

Հետևյալ դիագրամում ներկայացված են 2015 թվականի պետական ավարտական քննությունների արդյունքների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների տոկոսային թվերը «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: Դիագրամի օգնությամբ մենք կարող ենք համեմատել այդ արդյունքները:

Դիագրամ 7.1




Ինչպես տեսնում ենք՝ պետական ավարտական և միասնական քննությունների ավարտական մասի միավորների ընդհանուր բաշխվածությունը խիստ տարբեր է: Միասնական քննությունների ավարտական մասի ցածր միավորներ ստացած մասնակիցների խումբը մոտ երկու անգամ փոքր է պետական ավարտական քննությունների համապատասխան խմբից: Եվ հակառակը, միասնական քննությունների ավարտական մասից 18-ից բարձր միավոր հավաքած մասնակիցների խումբը մոտ երկու անգամ մեծ է պետական ավարտական քննությունների համապատասխան խմբից:

Օրինակ՝ մաթեմատիկայից 2015 թվականների պետական ավարտական քննությունների մասնակիցների 44.4 %-ը 8-12 միավորներ ստացածների խմբում են, իսկ միասնական քննության ավարտական մասի 8-12 միավոր ստացածների խումբը կազմում է ընդամենը 16.6 %: Հայոց պատմության դեպքում մեծ տարբերություն է նկատվում բարձր միավորներ հավաքած մասնակիցների խմբերում, միասնականի ավարտական մասի մասնակիցների 34.5 %-ը 18-ից բարձր միավորներ ստացած խմբում են, և գրեթե երկու անգամ շատ են պետական ավարտական քննությունների համապատասխան խմբից:

Այս դիագրամի մեկնաբանությունը և քննությունների՝ արդյունքների համեմատությունները պահանջում են որոշակի զգուշություն և սահմանափակումներ: Ու թեև միավորները համապատասխանեցվել են ընդհանուր 20 միավորանոց սանդղակին՝ միավորների բաշխումների և միջին միավորների համեմատությունը տեղին չէ, քանի որ դրանք տարբեր քննություններից և տարբեր թեստերից ստացված միավորներ են, մասնակիցների ընտրանքն էլ երկու դեպքում տարբեր է:

# 8. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Աղյուսակում ներկայացված են պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի:

Աղյուսակ 8

| Դպրոցի տիպը | Մասնակիցների թիվը | Առավելագույն միավորը | Նվազագույն միավորը | Միջին միավորը | Մինչև 8 միավոր հավաքած մասնակիցներ | | 8-13 միավոր հավաքած մասնակիցներ | | 14-16 միավոր հավաքած մասնակիցներ | | 17-18 միավոր հավաքած մասնակիցներ | | 19-20 միավոր հավաքած մասնակիցներ | | 20 միավորներ հավաքած մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը |
| **Հայոց լեզու և հայ գրականություն** | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 5730 | 20 | 1 | 14.0 | 28 | 0.5 | 2367 | 41.3 | 1685 | 29.4 | 1093 | 19.1 | 557 | 9.7 | 152 |
| Հիմնական | 140 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 46 | 32.9 | 52 | 37.1 | 31 | 22.1 | 11 | 7.9 | 3 |
| Միջնակարգ | 9290 | 20 | 1 | 12.0 | 13 | 0.1 | 5498 | 59.2 | 2338 | 25.2 | 1075 | 11.6 | 366 | 3.9 | 106 |
| Հենակետային | 747 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 339 | 45.4 | 236 | 31.6 | 115 | 15.4 | 57 | 7.6 | 11 |
| Հատուկ | 33 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 21 | 63.6 | 8 | 24.2 | 3 | 9.1 | 1 | 3.0 | 0 |
| Վարժարան | 493 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 135 | 27.4 | 120 | 24.3 | 137 | 27.8 | 101 | 20.5 | 37 |
| Կրթահամալիր | 168 | 20 | 8 | 16.0 | 0 | 0.0 | 33 | 19.6 | 36 | 21.4 | 18 | 10.7 | 81 | 48.2 | 52 |
| Մասնագիտացված | 73 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 38 | 52.1 | 16 | 21.9 | 9 | 12.3 | 10 | 13.7 | 0 |
| ՍՊԸ | 258 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 89 | 34.5 | 58 | 22.5 | 59 | 22.9 | 52 | 20.2 | 14 |
| **Ռուսաց լեզու** | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 3121 | 20 | 1 | 13.0 | 3 | 0.1 | 1583 | 50.7 | 819 | 26.2 | 494 | 15.8 | 222 | 7.1 | 68 |
| Հիմնական | 76 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 28 | 36.8 | 25 | 32.9 | 20 | 26.3 | 3 | 3.9 | 3 |
| Միջնակարգ | 6634 | 20 | 1 | 11.0 | 2 | 0.0 | 4571 | 68.9 | 1426 | 21.5 | 502 | 7.6 | 133 | 2.0 | 24 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հենակետային | 418 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 181 | 43.3 | 178 | 42.6 | 51 | 12.2 | 8 | 1.9 | 1 |
| Հատուկ | 6 | 19 | 9 | 14.0 | 0 | 0.0 | 3 | 50.0 | 0 | 0.0 | 2 | 33.3 | 1 | 16.7 | 0 |
| Վարժարան | 259 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 124 | 47.9 | 41 | 15.8 | 70 | 27.0 | 24 | 9.3 | 10 |
| Կրթահամալիր | 64 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 46 | 71.9 | 16 | 25.0 | 0 | 0.0 | 2 | 3.1 | 1 |
| Մասնագիտացված | 57 | 17 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 40 | 70.2 | 14 | 24.6 | 3 | 5.3 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 105 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 65 | 61.9 | 15 | 14.3 | 16 | 15.2 | 9 | 8.6 | 1 |
| Հայոց պատմություն | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 7903 | 20 | 1 | 14.0 | 5 | 0.1 | 2697 | 34.1 | 2787 | 35.3 | 1817 | 23.0 | 597 | 7.6 | 138 |
| Հիմնական | 156 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 78 | 50.0 | 38 | 24.4 | 27 | 17.3 | 13 | 8.3 | 4 |
| Միջնակարգ | 10402 | 20 | 6 | 12.0 | 1 | 0.0 | 6206 | 59.7 | 2644 | 25.4 | 1223 | 11.8 | 328 | 3.2 | 50 |
| Հենակետային | 840 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 340 | 40.5 | 288 | 34.3 | 171 | 20.4 | 41 | 4.9 | 6 |
| Հատուկ | 37 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 25 | 67.6 | 7 | 18.9 | 3 | 8.1 | 2 | 5.4 | 0 |
| Վարժարան | 620 | 20 | 8 | 16.0 | 0 | 0.0 | 135 | 21.8 | 163 | 26.3 | 153 | 24.7 | 169 | 27.3 | 37 |
| Կրթահամալիր | 196 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 55 | 28.1 | 34 | 17.3 | 74 | 37.8 | 33 | 16.8 | 5 |
| Մասնագիտացված | 76 | 18 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 59 | 77.6 | 16 | 21.1 | 1 | 1.3 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 321 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 162 | 50.5 | 69 | 21.5 | 50 | 15.6 | 40 | 12.5 | 3 |
| Անգլերեն | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 2416 | 20 | 3 | 14.0 | 1 | 0.0 | 800 | 33.1 | 787 | 32.6 | 554 | 22.9 | 274 | 11.3 | 76 |
| Հիմնական | 55 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 17 | 30.9 | 14 | 25.5 | 16 | 29.1 | 8 | 14.5 | 2 |
| Միջնակարգ | 1892 | 20 | 7 | 12.0 | 1 | 0.1 | 1064 | 56.2 | 501 | 26.5 | 243 | 12.8 | 83 | 4.4 | 14 |
| Հենակետային | 274 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 61 | 22.3 | 86 | 31.4 | 81 | 29.6 | 46 | 16.8 | 8 |
| Հատուկ | 21 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 15 | 71.4 | 2 | 9.5 | 3 | 14.3 | 1 | 4.8 | 0 |
| Վարժարան | 144 | 20 | 8 | 17.0 | 0 | 0.0 | 7 | 4.9 | 31 | 21.5 | 40 | 27.8 | 66 | 45.8 | 36 |
| Կրթահամալիր | 93 | 20 | 8 | 17.0 | 0 | 0.0 | 11 | 11.8 | 8 | 8.6 | 17 | 18.3 | 57 | 61.3 | 17 |
| Մասնագիտացված | 10 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 5 | 50.0 | 3 | 30.0 | 1 | 10.0 | 1 | 10.0 | 0 |
| ՍՊԸ | 152 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 55 | 36.2 | 31 | 20.4 | 31 | 20.4 | 35 | 23.0 | 17 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Աշխարհագրություն** | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 2317 | 20 | 3 | 14.0 | 4 | 0.2 | 971 | 41.9 | 619 | 26.7 | 532 | 23.0 | 191 | 8.2 | 32 |
| Հիմնական | 43 | 19 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 15 | 34.9 | 17 | 39.5 | 8 | 18.6 | 3 | 7.0 | 0 |
| Միջնակարգ | 2460 | 20 | 4 | 12.0 | 16 | 0.7 | 1369 | 55.7 | 696 | 28.3 | 299 | 12.2 | 80 | 3.3 | 8 |
| Հենակետային | 132 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 60 | 45.5 | 51 | 38.6 | 18 | 13.6 | 3 | 2.3 | 2 |
| Հատուկ | 6 | 13 | 8 | 10.0 | 0 | 0.0 | 6 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| Վարժարան | 90 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 22 | 24.4 | 22 | 24.4 | 28 | 31.1 | 18 | 20.0 | 3 |
| Կրթահամալիր | 30 | 19 | 9 | 15.0 | 0 | 0.0 | 9 | 30.0 | 4 | 13.3 | 13 | 43.3 | 4 | 13.3 | 0 |
| Մասնագիտացված | 47 | 18 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 38 | 80.9 | 8 | 17.0 | 1 | 2.1 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 118 | 20 | 7 | 12.0 | 2 | 1.7 | 76 | 64.4 | 27 | 22.9 | 10 | 8.5 | 3 | 2.5 | 1 |
| **Գերմաներեն** | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 94 | 20 | 7 | 13.0 | 1 | 1.1 | 44 | 46.8 | 22 | 23.4 | 17 | 18.1 | 10 | 10.6 | 3 |
| Միջնակարգ | 724 | 20 | 4 | 12.0 | 17 | 2.3 | 422 | 58.3 | 191 | 26.4 | 70 | 9.7 | 24 | 3.3 | 9 |
| Վարժարան | 1 | 18 | 18 | 18.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 100.0 | 0 | 0.0 | 0 |
| Կրթահամալիր | 4 | 20 | 18 | 19.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 25.0 | 3 | 75.0 | 2 |
| Մասնագիտացված | 6 | 10 | 8 | 8.0 | 0 | 0.0 | 6 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 1 | 20 | 20 | 20.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 100.0 | 1 |
| **Կենսաբանություն** | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 2321 | 20 | 4 | 14.0 | 4 | 0.2 | 904 | 38.9 | 757 | 32.6 | 463 | 19.9 | 193 | 8.3 | 40 |
| Հիմնական | 71 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 20 | 28.2 | 22 | 31.0 | 21 | 29.6 | 8 | 11.3 | 2 |
| Միջնակարգ | 3772 | 20 | 4 | 12.0 | 7 | 0.2 | 2096 | 55.6 | 1066 | 28.3 | 477 | 12.6 | 126 | 3.3 | 28 |
| Հենակետային | 146 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 61 | 41.8 | 34 | 23.3 | 30 | 20.5 | 21 | 14.4 | 1 |
| Հատուկ | 8 | 19 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 3 | 37.5 | 3 | 37.5 | 0 | 0.0 | 2 | 25.0 | 0 |
| Վարժարան | 141 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 24 | 17.0 | 54 | 38.3 | 43 | 30.5 | 20 | 14.2 | 4 |
| Կրթահամալիր | 62 | 20 | 8 | 16.0 | 0 | 0.0 | 10 | 16.1 | 16 | 25.8 | 6 | 9.7 | 30 | 48.4 | 22 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մասնագիտացված | 4 | 13 | 8 | 9.0 | 0 | 0.0 | 4 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 91 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 59 | 64.8 | 15 | 16.5 | 7 | 7.7 | 10 | 11.0 | 2 |
| Ֆրանսերեն | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 168 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 46 | 27.4 | 55 | 32.7 | 41 | 24.4 | 26 | 15.5 | 5 |
| Հիմնական | 15 | 17 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 8 | 53.3 | 6 | 40.0 | 1 | 6.7 | 0 | 0.0 | 0 |
| Միջնակարգ | 300 | 19 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 196 | 65.3 | 74 | 24.7 | 23 | 7.7 | 7 | 2.3 | 0 |
| Հենակետային | 3 | 17 | 9 | 13.0 | 0 | 0.0 | 1 | 33.3 | 1 | 33.3 | 1 | 33.3 | 0 | 0.0 | 0 |
| Հատուկ | 2 | 11 | 8 | 9.0 | 0 | 0.0 | 2 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| Վարժարան | 17 | 20 | 9 | 13.0 | 0 | 0.0 | 11 | 64.7 | 2 | 11.8 | 2 | 11.8 | 2 | 11.8 | 2 |
| Մաթեմատիկա | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 6640 | 20 | 3 | 14.0 | 27 | 0.4 | 2586 | 38.9 | 2168 | 32.7 | 1373 | 20.7 | 486 | 7.3 | 114 |
| Հիմնական | 143 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 60 | 42.0 | 54 | 37.8 | 20 | 14.0 | 9 | 6.3 | 3 |
| Միջնակարգ | 9744 | 20 | 4 | 12.0 | 4 | 0.0 | 6361 | 65.3 | 2164 | 22.2 | 950 | 9.7 | 265 | 2.7 | 57 |
| Հենակետային | 494 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 207 | 41.9 | 175 | 35.4 | 77 | 15.6 | 35 | 7.1 | 8 |
| Հատուկ | 33 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 23 | 69.7 | 8 | 24.2 | 0 | 0.0 | 2 | 6.1 | 0 |
| Վարժարան | 384 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 115 | 29.9 | 104 | 27.1 | 90 | 23.4 | 75 | 19.5 | 39 |
| Կրթահամալիր | 158 | 20 | 8 | 16.0 | 0 | 0.0 | 48 | 30.4 | 19 | 12.0 | 28 | 17.7 | 63 | 39.9 | 35 |
| Մասնագիտացված | 74 | 18 | 8 | 10.0 | 0 | 0.0 | 64 | 86.5 | 5 | 6.8 | 5 | 6.8 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 287 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 135 | 47.0 | 75 | 26.1 | 45 | 15.7 | 32 | 11.1 | 7 |
| Քիմիա | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 630 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 281 | 44.6 | 185 | 29.4 | 131 | 20.8 | 33 | 5.2 | 5 |
| Հիմնական | 17 | 18 | 10 | 13.0 | 0 | 0.0 | 8 | 47.1 | 5 | 29.4 | 4 | 23.5 | 0 | 0.0 | 0 |
| Միջնակարգ | 1014 | 20 | 4 | 12.0 | 13 | 1.3 | 597 | 58.9 | 238 | 23.5 | 119 | 11.7 | 47 | 4.6 | 7 |
| Հենակետային | 20 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 12 | 60.0 | 3 | 15.0 | 3 | 15.0 | 2 | 10.0 | 0 |
| Հատուկ | 3 | 15 | 8 | 10.0 | 0 | 0.0 | 2 | 66.7 | 1 | 33.3 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| Վարժարան | 18 | 18 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 3 | 16.7 | 3 | 16.7 | 12 | 66.7 | 0 | 0.0 | 0 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրթահամալիր | 7 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 5 | 71.4 | 0 | 0.0 | 1 | 14.3 | 1 | 14.3 | 1 |
| Մասնագիտացված | 4 | 8 | 8 | 8.0 | 0 | 0.0 | 4 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| ՍՊԸ | 15 | 19 | 15 | 17.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 6 | 40.0 | 4 | 26.7 | 5 | 33.3 | 0 |
| Ֆիզիկա | | | | | | | | | | | | | | | |
| Ավագ | 2126 | 20 | 3 | 13.0 | 7 | 0.3 | 939 | 44.2 | 532 | 25.0 | 408 | 19.2 | 240 | 11.3 | 44 |
| Հիմնական | 26 | 20 | 11 | 15.0 | 0 | 0.0 | 6 | 23.1 | 11 | 42.3 | 5 | 19.2 | 4 | 15.4 | 3 |
| Միջնակարգ | 3066 | 20 | 3 | 12.0 | 17 | 0.6 | 1825 | 59.5 | 733 | 23.9 | 386 | 12.6 | 105 | 3.4 | 19 |
| Հենակետային | 425 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 233 | 54.8 | 97 | 22.8 | 69 | 16.2 | 26 | 6.1 | 2 |
| Հատուկ | 19 | 17 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 14 | 73.7 | 4 | 21.1 | 1 | 5.3 | 0 | 0.0 | 0 |
| Վարժարան | 216 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 64 | 29.6 | 38 | 17.6 | 52 | 24.1 | 62 | 28.7 | 15 |
| Կրթահամալիր | 61 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 24 | 39.3 | 1 | 1.6 | 5 | 8.2 | 31 | 50.8 | 14 |
| Մասնագիտացված | 16 | 19 | 8 | 9.0 | 0 | 0.0 | 15 | 93.8 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 6.3 | 0 |
| ՍՊԸ | 102 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 33 | 32.4 | 19 | 18.6 | 27 | 26.5 | 23 | 22.5 | 2 |

# 9. 2015 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ մարզերի

Աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից պետական ավարտական քննությունների միջին միավորները (ստանդարտ շեղումը) ըստ ՀՀ մարզերի: Մուգ կանաչ գույնով նշված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են: Նկատելի է, որ Երևանի դպրոցների շրջանավարտների միջին միավորները ավարտական քննություններից բոլոր առարկաների համար բարձր են ընդհանուր միջին միավորներից: Օրինակ՝ անգլերենից Երևանում, Շիրակում և Վայոց Ձորի մարզերում միջին միավորները բարձր են ընդհանուր միջին միավորից, մյուս մարզերում անգլերենից միջին միավորները ընդհանուր միջին միավորից ցածր են (տես աղյուսակ 9.1-ում):

Մարզերում պետական ավարտական քննությունների մասնակիցների թիվը ըստ առարկաների ներկայացված են աղյուսակ 9.1–ում:

Աղյուսակ 9.1

| | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Երևան | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց Ձոր | Տավուշ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայոց լեզու և հայ գրականություն** | 13.11 (3.1) | 12.81 (3.4) | 13.32 (3.3) | 12.72 (3.4) | 14.49 (3.4) | 12.68 (3.3) | 13.59 (3.4) | 13.37 (3.4) | 12.85 (3.4) | 13.63 (3.5) | 12.6 (3.2) |
| **Հայոց պատմություն** | 13.17 (3.1) | 12.84 (3.3) | 13.26 (3.4) | 12.6 (3.4) | 14.84 (2.9) | 12.9 (3.3) | 13.63 (3.1) | 13.77 (3.5) | 13.2 (3.1) | 13.9 (3.3) | 12.49 (3.1) |
| **Մաթեմատիկա** | 12.65 (3.2) | 12.16 (3.1) | 12.74 (3.5) | 12.3 (3.4) | 14.47 (3.3) | 12.63 (3.2) | 13.48 (3.1) | 13.18 (3.3) | 13.09 (3.2) | 13.02 (3.4) | 12.33 (3.1) |
| **Աշխարհագրություն** | 13.4 (3.2) | 12.42 (3.5) | 12.36 (3.2) | 12.31 (3.1) | 14.55 (3.2) | 12.11 (3.4) | 12.65 (3.3) | 13.94 (3.2) | 13.93 (3.0) | 13.96 (3.7) | 12.78 (3.3) |
| **Կենսաբանություն** | 12.52 (3.1) | 12.84 (3.3) | 13.72 (3.4) | 13.11 (3.6) | 14.48 (3.3) | 12.13 (3.2) | 13.6 (3.1) | 14.01 (3.2) | 13.33 (3.5) | 14.27 (3.5) | 12.92 (3.2) |
| **Քիմիա** | 13.22 (3.3) | 12.41 (3.8) | 12.7 (3.5) | 12.25 (3.5) | 14.45 (3.3) | 11.91 (3.7) | 12.95 (3.3) | 13.8 (3.5) | 11.95 (3.2) | 11.29 (3.1) | 12.8 (3.4) |
| **Ֆիզիկա** | 13.15 (3.4) | 11.4 (3.4) | 13.04 (3.9) | 12.5 (3.7) | 14.6 (3.8) | 12.02 (3.5) | 12.84 (3.6) | 13.32 (3.5) | 12.6 (3.6) | 12.91 (3.9) | 11.81 (3.3) |
| **Անգլերեն** | 13.16 (3.4) | 13.03 (3.6) | 13.02 (3.6) | 12.39 (3.6) | 15.68 (3.1) | 12.26 (3.2) | 14.03 (3.3) | 14.13 (3.4) | 12.5 (3.6) | 14.61 (3.4) | 13.27 (3.6) |
| **Ռուսաց լեզու** | 11.73 (3.1) | 11.93 (3.3) | 12.25 (3.4) | 11.8 (3.4) | 13.7 (3.3) | 12.33 (3.2) | 12.22 (3.3) | 12.59 (3.3) | 12.36 (3.3) | 12.5 (3.3) | 11.61 (3.0) |

## Վիճակագրական տվյալներ պետական ավարտական քննությունների արդյունքների մասին ըստ մարզերի

Աղյուսակ 9.2

| Մարզը | Մասնակիցների ընդհանուր թիվը | Առավելագույն միավորը | Նվազագույն միավորը | Միջին միավորը | Մինչև 8 միավոր հավաքած մասնակիցներ | | 8-13 միավոր հավաքած մասնակիցներ | | 14-16 միավոր հավաքած մասնակիցներ | | 17-18 միավոր հավաքած մասնակիցներ | | 19-20 միավոր հավաքած մասնակիցներ | | 20 միավոր հավաքած մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը | տոկոսը | թիվը |
| Հայոց լեզու և հայ գրականություն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 1092 | 20 | 5 | 13.0 | 1 | 0.1 | 602 | 55.1 | 302 | 27.7 | 143 | 13.1 | 44 | 4.0 | 13 |
| Արարատ | 1701 | 20 | 6 | 12.0 | 2 | 0.1 | 982 | 57.7 | 414 | 24.3 | 207 | 12.2 | 96 | 5.6 | 30 |
| Արմավիր | 1783 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 905 | 50.8 | 530 | 29.7 | 242 | 13.6 | 106 | 5.9 | 30 |
| Գեղարքունիք | 1697 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 1012 | 59.6 | 381 | 22.5 | 216 | 12.7 | 88 | 5.2 | 27 |
| Երևան | 4092 | 20 | 1 | 14.0 | 27 | 0.7 | 1500 | 36.7 | 1251 | 30.6 | 820 | 20.0 | 494 | 12.1 | 139 |
| Լոռի | 1537 | 20 | 4 | 12.0 | 1 | 0.1 | 930 | 60.5 | 365 | 23.7 | 157 | 10.2 | 84 | 5.5 | 29 |
| Կոտայք | 1432 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 704 | 49.2 | 386 | 27.0 | 235 | 16.4 | 107 | 7.5 | 27 |
| Շիրակ | 1685 | 20 | 4 | 13.0 | 5 | 0.3 | 865 | 51.3 | 458 | 27.2 | 241 | 14.3 | 116 | 6.9 | 47 |
| Սյունիք | 819 | 20 | 3 | 12.0 | 3 | 0.4 | 471 | 57.5 | 184 | 22.5 | 117 | 14.3 | 44 | 5.4 | 15 |
| Վայոց Ձոր | 409 | 20 | 1 | 13.0 | 2 | 0.5 | 187 | 45.7 | 118 | 28.9 | 75 | 18.3 | 27 | 6.6 | 7 |
| Տավուշ | 840 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 520 | 61.9 | 197 | 23.5 | 92 | 11.0 | 31 | 3.7 | 11 |
| Ռուսաց լեզու | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 753 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 520 | 69.1 | 164 | 21.8 | 52 | 6.9 | 17 | 2.3 | 3 |
| Արարատ | 1207 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 792 | 65.6 | 294 | 24.4 | 98 | 8.1 | 23 | 1.9 | 7 |
| Արմավիր | 1072 | 20 | 5 | 12.0 | 1 | 0.1 | 669 | 62.4 | 262 | 24.4 | 105 | 9.8 | 35 | 3.3 | 9 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գեղարքունիք | 1030 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 692 | 67.2 | 209 | 20.3 | 103 | 10.0 | 26 | 2.5 | 7 |
| Երևան | 1850 | 20 | 1 | 13.0 | 2 | 0.1 | 869 | 47.0 | 534 | 28.9 | 317 | 17.1 | 128 | 6.9 | 31 |
| Լոռի | 1155 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 729 | 63.1 | 275 | 23.8 | 121 | 10.5 | 30 | 2.6 | 8 |
| Կոտայք | 960 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 628 | 65.4 | 202 | 21.0 | 93 | 9.7 | 37 | 3.9 | 6 |
| Շիրակ | 1179 | 20 | 1 | 12.0 | 1 | 0.1 | 718 | 60.9 | 277 | 23.5 | 126 | 10.7 | 57 | 4.8 | 18 |
| Սյունիք | 681 | 20 | 7 | 12.0 | 1 | 0.1 | 445 | 65.3 | 137 | 20.1 | 67 | 9.8 | 31 | 4.6 | 16 |
| Վայոց Ձոր | 317 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 202 | 63.7 | 66 | 20.8 | 37 | 11.7 | 12 | 3.8 | 1 |
| Տավուշ | 628 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 446 | 71.0 | 136 | 21.7 | 40 | 6.4 | 6 | 1.0 | 2 |
| Հայոց պատմություն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 1243 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 691 | 55.6 | 347 | 27.9 | 157 | 12.6 | 48 | 3.9 | 5 |
| Արարատ | 1906 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 1069 | 56.1 | 511 | 26.8 | 262 | 13.7 | 64 | 3.4 | 19 |
| Արմավիր | 2073 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 1084 | 52.3 | 535 | 25.8 | 353 | 17.0 | 101 | 4.9 | 14 |
| Գեղարքունիք | 1911 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 1118 | 58.5 | 475 | 24.9 | 252 | 13.2 | 66 | 3.5 | 9 |
| Երևան | 5248 | 20 | 1 | 14.0 | 5 | 0.1 | 1561 | 29.7 | 1953 | 37.2 | 1278 | 24.4 | 451 | 8.6 | 68 |
| Լոռի | 1933 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 1114 | 57.6 | 479 | 24.8 | 236 | 12.2 | 104 | 5.4 | 13 |
| Կոտայք | 1803 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 867 | 48.1 | 546 | 30.3 | 306 | 17.0 | 84 | 4.7 | 7 |
| Շիրակ | 2012 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 952 | 47.3 | 527 | 26.2 | 342 | 17.0 | 191 | 9.5 | 77 |
| Սյունիք | 1106 | 20 | 6 | 13.0 | 1 | 0.1 | 606 | 54.8 | 302 | 27.3 | 143 | 12.9 | 54 | 4.9 | 24 |
| Վայոց Ձոր | 464 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 205 | 44.2 | 127 | 27.4 | 94 | 20.3 | 38 | 8.2 | 4 |
| Տավուշ | 1008 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 615 | 61.0 | 271 | 26.9 | 100 | 9.9 | 22 | 2.2 | 3 |
| Անգլերեն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 234 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 117 | 50.0 | 70 | 29.9 | 39 | 16.7 | 8 | 3.4 | 0 |
| Արարատ | 352 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 180 | 51.1 | 106 | 30.1 | 49 | 13.9 | 17 | 4.8 | 5 |
| Արմավիր | 582 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 307 | 52.7 | 152 | 26.1 | 85 | 14.6 | 38 | 6.5 | 6 |
| Գեղարքունիք | 440 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 262 | 59.5 | 114 | 25.9 | 39 | 8.9 | 25 | 5.7 | 1 |
| Երևան | 1935 | 20 | 3 | 15.0 | 1 | 0.1 | 432 | 22.3 | 602 | 31.1 | 519 | 26.8 | 381 | 19.7 | 129 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոռի | 420 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 275 | 65.5 | 92 | 21.9 | 37 | 8.8 | 16 | 3.8 | 3 |
| Կոտայք | 387 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 146 | 37.7 | 134 | 34.6 | 82 | 21.2 | 25 | 6.5 | 6 |
| Շիրակ | 386 | 20 | 7 | 14.0 | 1 | 0.3 | 160 | 41.5 | 111 | 28.8 | 76 | 19.7 | 38 | 9.8 | 13 |
| Սյունիք | 173 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 106 | 61.3 | 34 | 19.7 | 19 | 11.0 | 14 | 8.1 | 5 |
| Վայոց Ձոր | 61 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 19 | 31.1 | 23 | 37.7 | 12 | 19.7 | 7 | 11.5 | 2 |
| Տավուշ | 128 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 61 | 47.7 | 32 | 25.0 | 32 | 25.0 | 3 | 2.3 | 0 |
| Աշխարհագրություն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 271 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 130 | 48.0 | 84 | 31.0 | 46 | 17.0 | 11 | 4.1 | 3 |
| Արարատ | 517 | 20 | 4 | 12.0 | 15 | 2.9 | 290 | 56.1 | 137 | 26.5 | 57 | 11.0 | 18 | 3.5 | 3 |
| Արմավիր | 583 | 20 | 7 | 12.0 | 2 | 0.3 | 366 | 62.8 | 136 | 23.3 | 70 | 12.0 | 9 | 1.5 | 2 |
| Գեղարքունիք | 335 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 203 | 60.6 | 95 | 28.4 | 30 | 9.0 | 7 | 2.1 | 1 |
| Երևան | 1690 | 20 | 3 | 14.0 | 1 | 0.1 | 614 | 36.3 | 479 | 28.3 | 440 | 26.0 | 156 | 9.2 | 20 |
| Լոռի | 381 | 20 | 7 | 12.0 | 1 | 0.3 | 252 | 66.1 | 75 | 19.7 | 33 | 8.7 | 20 | 5.2 | 4 |
| Կոտայք | 441 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 269 | 61.0 | 100 | 22.7 | 54 | 12.2 | 18 | 4.1 | 1 |
| Շիրակ | 333 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 132 | 39.6 | 114 | 34.2 | 71 | 21.3 | 16 | 4.8 | 4 |
| Սյունիք | 317 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 124 | 39.1 | 130 | 41.0 | 48 | 15.1 | 15 | 4.7 | 7 |
| Վայոց Ձոր | 146 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 64 | 43.8 | 31 | 21.2 | 36 | 24.7 | 15 | 10.3 | 1 |
| Տավուշ | 272 | 19 | 5 | 12.0 | 3 | 1.1 | 157 | 57.7 | 71 | 26.1 | 24 | 8.8 | 17 | 6.3 | 0 |
| Գերմաներեն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 55 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 33 | 60.0 | 16 | 29.1 | 5 | 9.1 | 1 | 1.8 | 0 |
| Արարատ | 164 | 19 | 4 | 11.0 | 16 | 9.8 | 92 | 56.1 | 37 | 22.6 | 15 | 9.1 | 4 | 2.4 | 0 |
| Արմավիր | 83 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 51 | 61.4 | 21 | 25.3 | 9 | 10.8 | 2 | 2.4 | 1 |
| Գեղարքունիք | 268 | 20 | 7 | 12.0 | 1 | 0.4 | 159 | 59.3 | 63 | 23.5 | 33 | 12.3 | 12 | 4.5 | 5 |
| Երևան | 14 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 6 | 42.9 | 1 | 7.1 | 1 | 7.1 | 6 | 42.9 | 4 |
| Լոռի | 58 | 20 | 9 | 14.0 | 0 | 0.0 | 21 | 36.2 | 27 | 46.6 | 9 | 15.5 | 1 | 1.7 | 1 |
| Կոտայք | 32 | 18 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 19 | 59.4 | 8 | 25.0 | 5 | 15.6 | 0 | 0.0 | 0 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակ | 89 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 53 | 59.6 | 17 | 19.1 | 9 | 10.1 | 10 | 11.2 | 3 |
| Սյունիք | 32 | 18 | 4 | 11.0 | 1 | 3.1 | 18 | 56.3 | 12 | 37.5 | 1 | 3.1 | 0 | 0.0 | 0 |
| Վայոց Ձոր | 11 | 18 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 7 | 63.6 | 3 | 27.3 | 1 | 9.1 | 0 | 0.0 | 0 |
| Տավուշ | 24 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 13 | 54.2 | 8 | 33.3 | 1 | 4.2 | 2 | 8.3 | 1 |
| Կենսաբանություն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 509 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 314 | 61.7 | 130 | 25.5 | 56 | 11.0 | 9 | 1.8 | 0 |
| Արարատ | 623 | 20 | 6 | 12.0 | 4 | 0.6 | 338 | 54.3 | 183 | 29.4 | 82 | 13.2 | 16 | 2.6 | 4 |
| Արմավիր | 616 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 278 | 45.1 | 175 | 28.4 | 115 | 18.7 | 48 | 7.8 | 8 |
| Գեղարքունիք | 764 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 407 | 53.3 | 191 | 25.0 | 122 | 16.0 | 44 | 5.8 | 11 |
| Երևան | 1352 | 20 | 4 | 14.0 | 3 | 0.2 | 479 | 35.4 | 452 | 33.4 | 285 | 21.1 | 133 | 9.8 | 45 |
| Լոռի | 609 | 20 | 4 | 12.0 | 1 | 0.2 | 398 | 65.4 | 146 | 24.0 | 45 | 7.4 | 19 | 3.1 | 3 |
| Կոտայք | 584 | 20 | 6 | 13.0 | 1 | 0.2 | 279 | 47.8 | 187 | 32.0 | 94 | 16.1 | 23 | 3.9 | 2 |
| Շիրակ | 797 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 338 | 42.4 | 259 | 32.5 | 128 | 16.1 | 72 | 9.0 | 15 |
| Սյունիք | 309 | 20 | 6 | 13.0 | 1 | 0.3 | 143 | 46.3 | 97 | 31.4 | 49 | 15.9 | 19 | 6.1 | 7 |
| Վայոց Ձոր | 173 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 63 | 36.4 | 57 | 32.9 | 33 | 19.1 | 20 | 11.6 | 4 |
| Տավուշ | 321 | 19 | 6 | 12.0 | 1 | 0.3 | 170 | 53.0 | 103 | 32.1 | 39 | 12.1 | 8 | 2.5 | 0 |
| Ֆրանսերեն | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 90 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 44 | 48.9 | 31 | 34.4 | 13 | 14.4 | 2 | 2.2 | 0 |
| Արարատ | 28 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 17 | 60.7 | 9 | 32.1 | 1 | 3.6 | 1 | 3.6 | 0 |
| Արմավիր | 39 | 17 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 28 | 71.8 | 10 | 25.6 | 1 | 2.6 | 0 | 0.0 | 0 |
| Գեղարքունիք | 2 | 18 | 16 | 17.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 50.0 | 1 | 50.0 | 0 | 0.0 | 0 |
| Երևան | 120 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 49 | 40.8 | 23 | 19.2 | 29 | 24.2 | 19 | 15.8 | 5 |
| Լոռի | 2 | 12 | 11 | 11.0 | 0 | 0.0 | 2 | 100.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 |
| Կոտայք | 94 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 44 | 46.8 | 37 | 39.4 | 10 | 10.6 | 3 | 3.2 | 1 |
| Շիրակ | 60 | 19 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 47 | 78.3 | 8 | 13.3 | 4 | 6.7 | 1 | 1.7 | 0 |
| Սյունիք | 14 | 20 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 2 | 14.3 | 8 | 57.1 | 1 | 7.1 | 3 | 21.4 | 1 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վայոց Ձոր | 3 | 19 | 8 | 15.0 | 0 | 0.0 | 1 | 33.3 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 2 | 66.7 | 0 |
| Տավուշ | 76 | 19 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 53 | 69.7 | 11 | 14.5 | 8 | 10.5 | 4 | 5.3 | 0 |
| Մաթեմատիկա | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 1147 | 20 | 3 | 12.0 | 4 | 0.3 | 704 | 61.4 | 268 | 23.4 | 134 | 11.7 | 37 | 3.2 | 6 |
| Արարատ | 1772 | 20 | 3 | 12.0 | 2 | 0.1 | 1165 | 65.7 | 420 | 23.7 | 149 | 8.4 | 36 | 2.0 | 9 |
| Արմավիր | 1861 | 20 | 4 | 12.0 | 19 | 1.0 | 1071 | 57.5 | 417 | 22.4 | 266 | 14.3 | 88 | 4.7 | 15 |
| Գեղարքունիք | 1907 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 1198 | 62.8 | 420 | 22.0 | 221 | 11.6 | 68 | 3.6 | 20 |
| Երևան | 4227 | 20 | 5 | 14.0 | 1 | 0.0 | 1572 | 37.2 | 1286 | 30.4 | 906 | 21.4 | 462 | 10.9 | 150 |
| Լոռի | 1715 | 20 | 7 | 12.0 | 1 | 0.1 | 1041 | 60.7 | 423 | 24.7 | 195 | 11.4 | 55 | 3.2 | 11 |
| Կոտայք | 1474 | 20 | 4 | 13.0 | 3 | 0.2 | 735 | 49.9 | 463 | 31.4 | 216 | 14.7 | 57 | 3.9 | 11 |
| Շիրակ | 1785 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 931 | 52.2 | 539 | 30.2 | 225 | 12.6 | 90 | 5.0 | 21 |
| Սյունիք | 897 | 20 | 7 | 13.0 | 1 | 0.1 | 485 | 54.1 | 262 | 29.2 | 117 | 13.0 | 32 | 3.6 | 10 |
| Վայոց Ձոր | 398 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 219 | 55.0 | 97 | 24.4 | 61 | 15.3 | 21 | 5.3 | 3 |
| Տավուշ | 929 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 606 | 65.2 | 199 | 21.4 | 103 | 11.1 | 21 | 2.3 | 7 |
| Քիմիա | | | | | | | | | | | | | | | |
| Արագածոտն | 113 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 55 | 48.7 | 37 | 32.7 | 17 | 15.0 | 4 | 3.5 | 0 |
| Արարատ | 217 | 20 | 4 | 12.0 | 13 | 6.0 | 106 | 48.8 | 57 | 26.3 | 37 | 17.1 | 4 | 1.8 | 2 |
| Արմավիր | 262 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 149 | 56.9 | 70 | 26.7 | 24 | 9.2 | 19 | 7.3 | 3 |
| Գեղարքունիք | 217 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 143 | 65.9 | 42 | 19.4 | 19 | 8.8 | 13 | 6.0 | 1 |
| Երևան | 347 | 20 | 8 | 14.0 | 0 | 0.0 | 134 | 38.6 | 94 | 27.1 | 93 | 26.8 | 26 | 7.5 | 5 |
| Լոռի | 171 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 111 | 64.9 | 35 | 20.5 | 21 | 12.3 | 4 | 2.3 | 1 |
| Կոտայք | 113 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 60 | 53.1 | 32 | 28.3 | 15 | 13.3 | 6 | 5.3 | 0 |
| Շիրակ | 93 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 41 | 44.1 | 27 | 29.0 | 17 | 18.3 | 8 | 8.6 | 1 |
| Սյունիք | 85 | 18 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 54 | 63.5 | 23 | 27.1 | 8 | 9.4 | 0 | 0.0 | 0 |
| Վայոց Ձոր | 21 | 19 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 15 | 71.4 | 5 | 23.8 | 0 | 0.0 | 1 | 4.8 | 0 |
| Տավուշ | 118 | 19 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 69 | 58.5 | 23 | 19.5 | 23 | 19.5 | 3 | 2.5 | 0 |

| Ֆիզիկա | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 325 | 19 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 151 | 46.5 | 110 | 33.8 | 53 | 16.3 | 11 | 3.4 | 0 |
| Արարատ | 562 | 20 | 4 | 11.0 | 14 | 2.5 | 370 | 65.8 | 123 | 21.9 | 47 | 8.4 | 8 | 1.4 | 1 |
| Արմավիր | 582 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 308 | 52.9 | 129 | 22.2 | 90 | 15.5 | 55 | 9.5 | 9 |
| Գեղարքունիք | 644 | 20 | 3 | 12.0 | 2 | 0.3 | 365 | 56.7 | 161 | 25.0 | 90 | 14.0 | 26 | 4.0 | 6 |
| Երևան | 1499 | 20 | 3 | 14.0 | 7 | 0.5 | 532 | 35.5 | 363 | 24.2 | 330 | 22.0 | 267 | 17.8 | 50 |
| Լոռի | 692 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 457 | 66.0 | 135 | 19.5 | 79 | 11.4 | 21 | 3.0 | 4 |
| Կոտայք | 495 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 275 | 55.6 | 108 | 21.8 | 86 | 17.4 | 26 | 5.3 | 2 |
| Շիրակ | 681 | 20 | 8 | 13.0 | 0 | 0.0 | 361 | 53.0 | 162 | 23.8 | 104 | 15.3 | 54 | 7.9 | 16 |
| Սյունիք | 319 | 20 | 5 | 12.0 | 1 | 0.3 | 188 | 58.9 | 69 | 21.6 | 50 | 15.7 | 11 | 3.4 | 6 |
| Վայոց Ձոր | 106 | 20 | 8 | 12.0 | 0 | 0.0 | 54 | 50.9 | 28 | 26.4 | 16 | 15.1 | 8 | 7.5 | 3 |
| Տավուշ | 193 | 20 | 8 | 11.0 | 0 | 0.0 | 129 | 66.8 | 51 | 26.4 | 8 | 4.1 | 5 | 2.6 | 2 |